

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Մ. ՄԱՆՐԻԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Մանրիկյան.

Ի պատասխան Ձեր 16.01.2020թ. հ.065 գրության՝ տեղեկացվում է, որ 2019 թվականին իրականացվել են հետևյալ ծրագրերը.

1. Երևանի ենթակայության առողջապահական հաստատությունների վերազինման շարունակականության ապահովման նպատակով 2019 թվականին Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռքբերում» ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 10 անուն, թվով 325 նոր բուժասրքավորում, այդ թվում՝ 3 հատ ռենտգեն ապարատ, 10 հատ ուլտրաձայնային թերապիայի սարքավորում, 20 հատ ցածր հաճախականության ֆիզիոթերապևտիկ սարք, 10 հատ հարվածալիքային թերապիայի սարքավորում, 2 հատ ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք՝ 2 տվիչով, 17 հատ մագնիսա-լազերային թերապիայի սարքավորում, 7 հատ մագնիսային թերապիայի սարքավորում, 5 հատ էլեկտրասրտագրության (ԷՍԳ) երկարատև մոնիտորինգի կրովի համակարգ, 200 հատ պուլսօքսիմետր, 51 հատ ինհալատոր-ներուլայզեր:

2. Երևանի ենթակայության պոլիկլինիկական բուժհաստատություններում աշխատող 100 բժշկի և 100 բուժքրոջ տրամադրվել է շարունակական մասնագիտական զարգացման (վերապատրաստման) անվճար ուղեգրեր:

3. Երևան համայնքի բնակիչների համար բուժճառայությունների մատուցման մատչելիության ապահովման նպատակով 2019 թվականին բնակիչներին տրամադրվել է 110 համակարգչային տոմոգրաֆիայի և թվով 99 մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայություն:

4. «Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրի շրջանակներում Երևանի ենթակայության «Թիվ 16 պոլիկլինիկա», «Թիվ 20 պոլիկլինիկա», «Նոր Արաբկիր» ԱԿ, «Նոր Արեշ պոլիկլինիկա», «Կարմիր Բլուր պոլիկլինիկա» ՓԲԸ-ներում կատարվել է տանիքների վերանորոգման աշխատանքներ, «Արշակունյաց պոլիկլինիկա» ՓԲԸ-ում կատարվել է տանիքի քայքայված սալի քանդման, նորի կառուցման աշխատանքներ, իսկ «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ում՝ ծառայության 5-րդ ենթակայանի հիմնանորոգման աշխատանքներ:

5. Երևանի ենթակայության բոլոր պոլիկլինիկական բուժհաստատություններում ներդրվել է պոլիկլինիկա դիմող հիվանդների էլեկտրոնային հերթագրման ծրագիրը, որի միջոցով հեռախոսազանգով կամ առցանց՝ համակարգչով կամ բջջային հեռախոսով կատարվում է հիվանդի հերթագրում տեղամասային թերապևտի կամ մանկաբույժի մոտ:

6. Թվարկված աշխատանքներն իրենց հերթին նպաստել են Երևանի ենթակայության պոլիկլինիկական բուժհաստատություններում վճարովի հիմունքներով մատուցվող բժշկական ծառայությունների ծավալի ավելացմանը: Այսպես՝ 2019 թվականին վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություններից ընդամենը մուտքերը կազմել են 4,725.2 մլն. դրամ, կամ 2017 թվականի նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճը կազմել է 1,745.9 մլն. դրամ կամ 59%:

Միաժամանակ տեղեկացվում է, որ 2020 թվականին «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում»

ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռքբերել 12 անուն, թվով 126 հատ բժշկական սարքավորում և պարագա, այդ թվում՝ ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք 2 տվիչով՝ 10 հատ, արյան մեջ տրոպոնինի մակարդակը որոշող սարք 10 հատ, իմունոֆերմենտային անալիզատոր՝ 7 հատ, բիոքիմիական անալիզատոր՝ 20 հատ, կոագուլոմետր՝ 14 հատ, ավտո-ռեֆ-կերատոմետր՝ 8 հատ, ճեղքային լամպ՝ 6 հատ, էլեկտրասրտագրության (ԷՍԳ) երկարատև մոնիտորինգի կրովի համակարգ (հոլտեր)՝ 5 հատ, կոլպոսկոպ՝ 7 հատ, գինեկոլոգիական սեղան՝ 39 հատ, ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք՝ էլաստոգրաֆիայի հնարավորությամբ՝ 1 հատ, սպիրոմետր՝ 1 հատ: Աչքի պաթոլոգիաների կանխարգելման, ինչպես նաև համալիր ախտորոշման և վերջնական արդյունք ապահովելու նպատակով նախատեսվում է Երևանի ենթակայության ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների ակնաբուժական կաբինետների հազեցում: Միրտ-անոթային հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման նպատակով նախատեսվում է հազեցնել ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունների սրտաբանական ծառայությունների նյութատեխնիկական (ախտորոշիչ-գործիքային) բազան:

«Բնակչությանը համակարգչային և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայության տրամադրում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռքբերել համակարգչային տոմոգրաֆիայի հետազոտություն (ԿՏ)՝ 150 հատ, մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտություն (ՄՌՏ)՝ 100 հատ:

«Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակայանի և համայնքային ենթակայության 2 պոլիկլինիկաների հիմնանորոգում: Ընդհանուր առմամբ պատվիրվել է համայնքային ենթակայության 5 պոլիկլինիկաների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը: Վերոնշյալ 5 օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներն իրականացնելուց հետո տնտեսում առաջանալու դեպքում լրացուցիչ կիրականացվի նաև նախատեսված պոլիկլինիկաների հիմնանորոգում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ